Հավելված 21
Վարչության 2024թ. ապրիլի 11-ի թիվ 01/029-161 L որոշման

Ուշադրություն.
արտարժույթով տրամարդվող վարկային քարտերի պայմանները կիրառելի են մինչև 30.05.2024թ. տրամադրված վարկերի համար, որից հետո վարկերի տրամադրումը դադարեցվում է:

Հ/Հ	Mastercard Meghu Card	AMD
	1. Հիմնական միջնորդավճարներ	
1.1	Քարտի տրամադրում (թողարկում)	Անվճար
1.2	Քարտի սպասարկման վարձ	Անվճար
1.3	Քարտային հաշվի նվազագույն մնացորդ	Չի սահմանվում
1.4	Կից քարտի սպասարկման վարձ	Որպես կից քարտ չի տրամադրվում
1.5	Կանխիկացման գործարքներ իրականացնելու դիմաց վճարներ	
1.5.1	– Բանկի բանկոմատներում	Ծառայությունը հասանելի չէ
1.5.2	– Բանկի կանխիկացման կետերում	Ծառայությունը հասանելի չէ
1.5.3	– «Արքա» համակարգի անդամ այլ բանկերի բանկոմատներում և կանխիկացման կետերում	Ծառայությունը հասանելի չէ
1.5.4	– Այլ բանկերի բանկոմատներում և կանխիկացման կետերում	Ծառայությունը հասանելի չէ
1.5.5	– Առանց քարտի առկայության կանխիկ գումարի ստացում Բանկի դրամարկղերից	Ծառայությունը հասանելի չէ (բացառությամբ քարտի և քարտային հաշվի փակման դեպքի՝ համաձայն ֆիզիկական անձանց համար կանխիկով գործառնությունների պայմանների)
1.6	Քարտային հաշվին դրամական միջոցների մուտքագրման գործարքներ իրականացնելու դիմաց վճարներ	
1.6.1	– Մինչև 200000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) կանխիկ դրամական միջոցների մուտքագրում բանկի դրամարկղից[1]	0.5% min 100 ՀՀ դրամ
1.6.2	– 200000 ՀՀ դրամից (կամ համարժեք արտարժույթից) ավել կանխիկ դրամական միջոցների մուտքագրում	Անվճար
1.6.3	– Քարտային հաշվի համալրում անկանխիկ փոխանցմամբ	Համաձայն ֆիզիկական անձ հաճախորդների բանկային փոխանցումների և վճարումների սակագների ու պայմանների
1.7	Քարտային հաշվին առկա մնացորդի դիմաց օրական հաշվարկվող տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք[2]	

1.7.1	– Օրվա ավարտի դրությամբ մնացորդը մեծ կամ հավասար է 250.000 ՀՀ դրամից	0.1%
1.7.2	– Օրվա ավարտի դրությամբ մնացորդը փոքր է 250.000 ՀՀ դրամից	0%
1.8	Ապրանքների և ծառայությունների համար անկանխիկ վճարման միջնորդավճար[3]	Էլեկտրոնային քսակների լիցքավորում 2%, մնացած բոլոր գործարքների դեպքում 0%
2. Կորուստ, վերաթողարկում և փակում		
2.1	Քարտի գործողության կասեցում բանկի հավաստագրման համակարգում	Անվճար
2.2	Քարտի գործողության կասեցում բանկի հավաստագրման համակարգում և տեղադրում Stop-list-ում	15000 ՀՀ դրամ 2 շաբաթվա համար
2.3	Քարտի վերաթողարկում՝ համաձայն հաճախորդի դիմումի	5000 ՀՀ դրամ
2.4	Արտասահմանում քարտի կորստի դեպքում կանխիկի արտակարգ տրամադրում	Ծառայությունը հասանելի չէ
2.5	Արտասահմանում քարտի ժամանակավոր արտակարգ վերաթողարկում	Ծառայությունը հասանելի չէ
2.6	PIN կոդի սխալ մուտքագրումների արդյունքում կասեցված քարտի գործողության ապակասեցում բանկի հավաստագրման համակարգում	1000 ՀՀ դրամ
2.7	Վճարային քարտի և քարտային հաշվի փակում	Անվճար
3. Տույժեր և տուգանքներ		
3.1	Քարտային հաշվի գերածախսի համար տույժ	Տարեկան 48%
3.2	Ոչ ակտիվ քարտերի փակում -ուժի մեջ է 28.05.2024թ.-ից	Ոչ ակտիվ դարձած քարտերը փակվում են, իսկ հաշիվները շարունակում են գործել բանկային հաշվի համար սահմանված սակագներին և սպասարկման պայմաններին համապատասխան: Սույն կետի իմաստով ոչ ակտիվ է համարվում 6 ամիս ժամկետանց քարտը, որով վերջին մեկ տարում հաճախորդի կողմից որևէ գործարք չի կատարվել:
4. Փոխանցումներ		
4.1	Քարտից քարտ փոխանցում Բանկի քարտին	Ծառայությունը հասանելի չէ
4.2	Քարտից քարտ փոխանցում «Արքա» համակարգի անդամ այլ բանկերի քարտերին	Ծառայությունը հասանելի չէ
4.3	Քարտային հաշվից ներբանկային փոխանցում	
4.3.1	Բանկ այցելելով կամ Հեռախոսային-բանկ համակարգով	Ծառայությունը հասանելի չէ

4.3.2	Internet-բանկինգ կամ Mobile-բանկինգ համակարգով	Ծառայությունը հասանելի չէ
4.4	Քարտային հաշվից միջբանկային փոխանցում ՀՀ բանկեր	
4.4.1	Բանկ այցելելով կամ Հեռախոսային-բանկ համակարգով	Ծառայությունը հասանելի չէ
4.4.2	Internet-բանկինգ կամ Mobile-բանկինգ համակարգով	Ծառայությունը հասանելի չէ
4.5	Քարտային հաշվից միջբանկային փոխանցում ոչ ՀՀ բանկեր	Ծառայությունը հասանելի չէ
5. Այլ միջնորդավճարներ		
5.1	Լուսանկարի արտապատկերում	Ծառայությունը հասանելի չէ
5.2	Priority Pass քարտի տրամադրում և վերաթողարկում	Ծառայությունը հասանելի չէ
5.3	Priority Pass ցանցին պատկանող սրահների մուտք	Ծառայությունը հասանելի չէ
5.4	Հավաստագրումների վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում	15 ՀՀ դրամ
5.5	Քարտային հաշվի վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում	
	- Վարկային պարտավորությունների մարման վերաբերյալ	Անվճար
5.6	Քաղվածքի և տեղեկանքի տրամադրում[4]	Համաձայն ֆիզիկական անձանց բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագների ու պայմանների
6. Հավաստագրման սահմանաչափեր		
6.1	Օրական կանխիկացման սահմանաչափ	Ծառայությունը հասանելի չէ
6.2	Օրական կանխիկացման գործարքների քանակ	Ծառայությունը հասանելի չէ
6.3	Օրական անկանխիկ գործարքների առավելագույն սահմանաչափ	3.000.000 ՀՀ դրամ
6.4	Օրական անկանխիկ գործարքների քանակ	10
7. Վարկավորման պայմաններ		
7.1	Վարկային գծի տեսակ	Նվազագույն սահմանաչափով վերականգնվող վարկային գիծ
7.2	Վարկային գծի տրամադրման եղանակ	Անկանխիկ
7.3	Վարկային գծի տրամադրման ձև	Միանվագ կամ մաս-մաս
7.4	Վարկային գծի ձևակերպման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղում (գրասենյակում) կամ գործակալի մոտ
7.5	Վարկային գծի տրամադրման ժամկետ (ամիսներով)	24
7.6	Վարկային գծի նվազագույն սահմանաչափ	120.000 ՀՀ դրամ

7.7	Վարկային գծի առավելագույն սահմանաչափ	900.000 ՀՀ դրամ Կապված հաճախորդի ԱՔՌԱ կանխատեսվող վարկանիշային միավորից, վարկային պատմությունից և Բանկի ներքին գնահատման մեթոդաբանությունից
7.8	Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք	0%
7.9	Վարկային գծի տոկոսագումարի հաշվարկման ձև (կիրառելի է միայն տարեկան անվանական տոկոսադրույքը 0-ից բարձր սահմանված լինելու դեպքում)[5]	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկային գծի օգտագործված մասի դիմաց անվանական տոկոսադրույքի կիրառման միջոցով հետևյալ բանաձևով՝ I=R*L/D, որտեղ I՝ մեկ օրվա տոկոսագումարն է R՝ անվանական տոկոսադրույքը L՝ վարկային գծի օգտագործված մասը D՝ տարվա փաստացի օրերի քանակը
7.10	Վարկային գծի սպասարկման վարձ	Կիսամյակային 14.5% հաշվարկված կիսամյակի վերջին օրվա դրությամբ վարկի օգտագործված մասի համար
7.11	**Տարեկան փաստացի տոկոսադրույք**	23.5%-ից - 24%
7.12	Ժամկետանց վարկային պարտավորությունների գծով տարեկան տոկոսադրույք	24%
7.13	Փոխհաշվարկի օր	Յուրաքանչյուր ամսվա 1-ը, եթե այլ օր չի սահմանվել պայմանագրով
7.14	Վարկային գծի մարման կարգ	Ոչ հավասարաչափ (դիֆերենցված) պարտադիր մարման չափով
7.15	Վարկային գծի օգտագործված մասի մարման միջանկյալ ժամկետ	Վճարային ժամանակահատվածի ընթացքում
7.16	Վարկային գծի տոկոսների մարում	Ամսական, Վճարային ժամանակահատվածի ընթացքում
7.17	Պարտադիր մարման չափ	• Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախսի (դեբիտորական պարտք) դիմաց հաշվարկված տույժ, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերածախս (դեբիտորական պարտք), • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Պայմանագրով, Վարկային գծի պայմանագրով և (կամ) Խառը պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ միջնորդավճարներ, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված

		տոկոսագումար (այդ թվում նաև ժամկետին չվերադարձված Կրեդիտի դիմաց հաշվարկված տոկոս և ժամկետանց տոկոսների տույժ)՝ առկայության դեպքում, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված Նվազագույն մարման սահմանաչափեր՝ առկայության դեպքում, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, • Նվազագույն մարման սահմանաչափ
7.18	Նվազագույն մարման սահմանաչափ	Փոխհաշվարկի օրվա դրությամբ ձևավորված վարկային պարտավորության 10%
7.19	Նվազեցման չափ	-
7.20	Վարկային գծի մարման հետաձգում	-
7.21	Մարման արտոնյալ ժամանակահատված	-
7.22	Վճարային ժամանակահատված	1 ամիս
7.23	Վարկային պատմության նկատմամբ պահանջներ	Նոր վարկային գծի տրամադրման համար ԱՔՌԱ կանխատեսվող վարկանշային միավոր և բանկի ներքին գնահատման համակարգի կողմից գնահատում
7.24	Վարկային պարտավորությունների նկատմամբ պահանջներ	Վարկային գծի դիմումի ընդունման պահին Հաճախորդի անունով Բանկում բացված չապահովված վարկերի հանրագումարը՝ ներառյալ հայցվող սահմանաչափը (չապահովված վարկերի հանրագումարի հաշվարկում չեն ներառվում հիփոթեքային վարկերի, ոսկու, անշարժ գույքի և դրամական միջոցների (ավանդի) ապահովվածությամբ և աշխատավարձային վարկերի գծով պարտավորությունները) չպետք է գերազանցի ԱՔՌԱ կանխատեսվող վարկանիշային միավորի հիման վրա հաճախորդին հասանելիք չապահովված վարկերի առավելագույն սահմանաչափը: Հաճախորդի անունով գործող Mastercard Express, NurCard Express, NurCard Gold

		Express կամ Mastercard Nur Ապառիկ վարկային գծի բացակայություն
7.25	Վարկային գծի երկարաձգում[6]	Վարկային գծի ժամկետանց գումարը երկարաձգման պահին չպետք է գերազանցի 5000 ՀՀ դրամը (կամ դրան համարժեք արտարժույթ հաշվարկված երկարաձգման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ միջին փոխարժեքով), «Տարիքային սահմանափակում» կետով սահմանված տարիքը գերազանցելուց հետո վարկային գծի երկարաձգում այլևս չի իրականացվում:
7.26	Վարկային սահմանաչափի ավելացում	Կախված յուրաքանչյուր եռամսյակի վերջում վարկային գծի սպասարկման նվազագույնը 6 ամսվա պատմություն ունեցող հաճախորդի ԱՔՌԱ կանխատեսվող վարկանիշային միավորից և վարկային պատմությունից: Ավելացման արդյունքում վարկային սահմանաչափը պետք է բավարարի «Վարկային պարտավորությունների նկատմամբ պահանջներ» կետով սահմանված պահանջներին: Սահմանաչափի ավելացման ամսաթվին հաճախորդի տարիքը «Տարիքային սահմանափակում» կետում նշված տարիքային սահմանափակման առավելագույն շեմից առնվազն մեկ տարի փոքր պետք է լինի:
7.27	Տարիքային սահմանափակում	Հաճախորդը պետք է լինի 21-63 տարեկան
7.28	Քաղաքացիության և գրանցման նկատմամբ պահանջներ	• Վարկառուն պետք է լինի ՀՀ քաղաքացի, • Վարկառուի հաշվառման վայր պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետությունը,
7.29	Անձնական տվյալների նկատմամբ պահանջներ	• բջջային հեռախոսահամարի առկայություն • էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն
8. Տրամադրման պայմաններ		
8.1	Վճարային քարտը տրամադրվում է վարկային գծի տրամադրման վերաբերյալ դրական որոշման առկայության դեպքում:	
8.2	Վճարային քարտը տրամադրվում է 2 տարի ժամկետով, վճարային քարտի վերաթողարկումը նոր ժամկետով իրականացվում է Վճարային քարտերի կանոններով սահմանված դեպքերում:	
8.3	Վճարային քարտը թողարկվում է վարկային գծի հաստատումից հետո առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկով սահմանված փաստաթղթերը	

	Բանկ ներկայացնելու դեպքում և ակտիվացվում է Վճարային քարտերի կանոններով սահմանված կարգով:

---

[1] Բանկին պատկանող ինքնասպասարկման սարքերի խափանման կամ այդ սարքերից Բանկում սպասարկվող հաշիվների և քարտերի համալրման ծառայության անհասանելիության դեպքում և ընթացքում, ինչպես նաև ինքնասպասարկման սարքերով չհամալրված Բանկի մասնաճյուղերի(ՀՍՎ) համար, տվյալ սակագինը սահմանվում է 0 (զրո) ՀՀ դրամ:

[2] «Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույքը» տարեկան կտրվածքով սակագներով սահմանված տոկոսադրույք է, որի հիման վրա Բանկը հաշվարկում է Հաճախորդին վճարման ենթակա տոկոսագումարները:

Օրինակ՝ 1000 ՀՀ դրամ * 5% = 50 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար

Հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) այն տոկոսն է, որն անձը կստանա 1000 ՀՀ դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերություն է հանդիսանում տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման արդյունքում ստացված գումարը:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը սահմանված է ՀՀ ԿԲ «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտբարերության հաշվարկում» Կանոնակարգ 8/02-ով:

Բանկը վճարման ենթակա տոկոսագումարը վճարում է հաճախորդի հաշվին յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ընդ որում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հաճախորդին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ տոկոսագումարի (եկամտի) օրենքով սահմանված չափով և փոխանցում պետական բյուջե:

[3] Անկանխիկ վճարումները սահմանափակված են Բանկի կայքէջում նշված առևտրի և/կամ սպասարկման կետերով, որոնց շրջանակից դուրս քարտի կիրառությունը արգելված է:

[4] *Բանկի հաճախորդներին տրամադրման ենթակա չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանության ժամկետը լրացած փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը:*

[5] **Տոկոսագումարի հաշվարկման օրինակ**

Վարկային գծի սահմանաչափ – 5.000.000 ՀՀ դրամ
Օգտագործված մաս-1.825.000 ՀՀ դրամ
Վարկի տարեկան տոկոսադրույք – 20%
Տարվա օրերի քանակ – 365 օր
Օրական կուտակվող տոկոսի մեծությունը կկազմի – 1000 ՀՀ դրամ (տոկոսագումարը կկազմի 1.825.000*20% /365=1000 ՀՀ դրամ)

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է ներքոհիշյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է (APR),

A – Վարկային գծի գումարը (Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված Վարկային գծի սկզբնական գումարը),

n – Վարկային գծի մարմանն ուղղված վճարի թիվը,

N – Վարկային գծի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը,

Kn – Վարկային գծի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը,

Dn – Վարկային գծի տրամադրման օրից մինչև Վարկային գծի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով,

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են Վարկային գծի պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Վարկային գծի պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ Վարկային գծի պայմանագիրը գործելու է Հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված ժամկետում, և կողմերը պատշաճ կերպով ու պայմանավորված ժամկետներում կատարելու են Վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Մարման արտոնյալ ժամանակահատվածը (առկայության դեպքում) հաշվի չի առնվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

Տարվա մեջ օրերի բազային թիվը ընդունված է տարվա փաստացի օրացուցային օրերի քանակը,

Հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կլորացվում է առնվազն մինչև մեկ հարյուրերորդական և բազմապատկվում է 100-ով՝ տոկոսային մեծություն ստանալու համար:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում չեն ներառվում՝

- Լրացուցիչ վճարային քարտի թողարկման վարձը և քարտային հաշվի տարեկան սպասարկման վարձը,
- Կրեդիտի մարման պարտավորության խախտման և վճարային սահմանաչափի գերազանցման համար հաշվարկվող տոկոսները, տուժանքը (տույժերը և տուգանքները),
- Կանխիկացման և կանխիկի մուտքագրման համար միջնորդավճարները,
- Տարբեր տեսակի փաստաթղթերի տրամադրման համար վճարները,
- Արժույթի փոխարկման համար միջնորդավճարները:

[6] Սույն կետում նշված պայմանը նախատեսվում է միայն վարկային պայմանագրով սահմանված լինելու դեպքում:

Նշված պայմաններին համապատասխանության ստուգումն իրականացվում է վարկային գծի ժամկետի ավարտից երկու ամիս առաջ:

Զգուշացում՝

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստրին և ԱՔՌԱ Քրեդիտ Ռեֆորտինգ ՓԲԸ-ին:

Որոշման կայացման և վարկային գծի տրամադրման ժամկետները՝

Անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից և նախնական հավանությունը ստանալուց հետո վարկային գծի տրամադրման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է և Հաճախորդը տեղեկացվում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերջնական որոշման կայացումից հետո վարկային գիծը տրամադրվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Վարկային գծի տրամադրման գործոններն են, այդ թվում, բայց ոչ միայն, սույն վարկավորման պայմանների պահանջներին բավարարելը և փաստաթղթերի ցանկով սահմանված պատշաճ փաստաթղթեր և տեղեկատություն տրամադրելը,

Վարկային գծի մերժման գործոններն են սույն վարկավորման պայմանների պահանջներին չբավարարելը, անարժանահավատ կամ թերի տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրումը, կամ Բանկի վարկավորման կանոններով սահմանված այլ դեպքերը:

ՈՒՇԱԴՐՈՒՅԹՈՒՆ՝ այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից: